

2629

244
S - 23

1893

S-23

ՏԱՄԱՐԿՈՒ


ԳՈՀԱՐԵԵՐ

معارف عموميہ نظارت جلیلستانک ۶ جاذی الاول
۳۰۹ و ۲۷ کانون اول ۳۰۴ تاریخی و ۹۶۳ نومرسی
رخصتنا مهندسیہ نشر اونشدر

مصارف آمریقان مسیونر شرکتی طرفندن تسویه اوندرق
طبع اونشدر

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՑ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. Յ. ՊՕՅԱՀԵԱՆ



ԱՐ

244 մի

8-93

11263

ՏԱՄՆԵՐԿՈՒ ԳՈՀԱՐՆԵՐ

Տասներկու գոհարներ կը փալէին չըէից
քահանայապետին լանջապանակին վրայ:
Ել. Ի. 15-29: Այս պատուական քա-
րերէն եւ ոչ մին կը նմանէր միւսին: Ոմանք
կապոյտ էին, ոմանք կարմիր, ոմանք դե-
ղին եւ ոմանք կանաչ: Խւրաքանչիւրին
վրայ զրուած էր Խսրայելի տամներկու ցե-
ղերէն միոյն անունը: այնպէս որ քահա-
նայապետը կը կրէր միշտ իւր սրտին վրայ
ցեղերուն բոլոր անունները երբ կը մանէր
սրբարանը՝ «Տէրոջը առջեւը յիշատակի
համար»:

Այս փոքր տետրակին մէջ կ'ուզեմ խօ-
սիլ Ընթերցողներուս տամներկու պայծառ
գոհարներուն վրայ զորս կրնան կրել իւ-
րենց սիրտերուն վրայ, բայց ոչ ինչպէս
քահանայապետը կը կրէր որպէս զի Աս-
տուծոյ ժողովուրդը յիշուէր անոր առջեւ,
այլ մանաւանդ իւրեւ յիշատակ այն սիրոյն
եւ կարողութեան որով Աստուծած պատ-
րաստ է օգնել եւ փրկել զմեզ: Այս գո-



933
39

հարք ամէնքն ալ տարբեր են իրարմէ . իւրաքանչիւրն ունի իւր յատուկ գոյնը եւ գեղեցկութիւնը , բայց իւրաքանչիւրին վրայ քանդակուած են Աստուծոյ կարողութիւնը եւ չնորհքը : Եթէ հիմա սկսինք կրել զանոնք , պիտի ընեն մեր բոլոր կեանքը պատուական եւ գեղեցիկ , եւ մահը կարող պիտի չըլլայ յափշտակել զանոնք մենէ . պիտի ըլլան մեր զարդարանքն յաւիտեան Աստուծոյ տաճարին մէջ երկինքը :

Այս տասներկու գոհարք են տասներկու բնաբանք Սուրբ Գրոց , որոց իւրաքանչիւրը կ'ըսէ թէ Աստուծած կարող է ընել բան մը որուն պէտք ունի իւր ժողովուրդը , Կրնանք անուանել զանոնք ռատօններկու կարողութիւնք : » Բնաբանները յիշելէ ետքը պիտի տամ զիրքին անունը որոյ մէջ կը գտնուին անոնք , բայց ոչ զլուխը եւ համարը . անոնց տեղը բաց պիտի թողում : Թերեւս մանկանասակ ընթերցողներս լցունեն այն տեղերը երբ ունենան պատեհ առիթ : Աստուծած տայ որ անոնց մէ ոմանք , մինչ կը վնատուեն Սուրբ Գիրքին մէջ այս տասներկու բնաբանները , ըլլան Քրիստոսէ յիշուած այն մարզուն

նման որ մինչ կը վնատուէր պատուական մարգարիտներ՝ գտաւ մեծազին մարգարիտ մը , այնպէս մեծ արձէք ունեցող մարգարիտ մը՝ որ զնաց ծախւց իւր բորբ ստացուածքը եւ զնեց զայն :

1. Անգամ մը , ոչ շատ կանուխի , հրդեհ ծագեցաւ տան մը մէջ ուր կը բնակէին քսանեւվեց անձինք : Անձցմէ ոմանք հազիւ կարող եղան ազատուիլ , բայց ի վերջոյ ամէնքն ալ ազատուեցան ցաւալի բացառութեամբ մը : Վեց տարեկան աղջիկ մը բոցերուն մէջ այրելով մեռաւ : Բարեկամ մը ջանաց , իւր կեանքը վաճանգի մէջ զնելով , ազատել զնա . բայց ծուխը եւ բոցերը թոյլ չտուին անոր մտնել տունը : Կ'ուզէր ազատել զնա . իրօք շատ կը փափաքէր ազատել , բայց կարող չէր :

Մեղաց կրակը եւ մեղաց դէմ Աստուծոյ բարկութեան կրակը կը պատէ զմեղ ամէն կողմէ եւ կը սպառնայ կորսնցունել զմեղ . եւ սակայն պէտք չէ որ մէկը կորսուի : Յիսուս ոչ միայն կ'ուզէ փրկել , այլ եւ կրնայ փրկել : Անոր առջեւ գժուարին բան չկայ : Վասն զի ինչպէս կը կարդանք նոր կտակարանին մէջ , «Բոլորուին

**Կարող ալ է ասլրեցընելու
անոնք՝ որ իրմով Աստուծոյ
կու գան չ,, (Երր.)**

Այս է եր առաջին գոհարը :

2. Եթէ կայ աշխարհիս մէջ գժուարա-
գոյն բան մը, զմեզ պահելն է : Մեր կեան-
քը, մեր անման հոգին, է աւանդ մը Աս-
տուծմէ յանձնուած առ մեղ, որպէս զի
ապահով եւ մաքուր պահենք զայն Աս-
տուծոյ համար :

Դիւրին չէ զայս ընել : Երբէք փորձած
ես պահել փոքր տղայ մը միակ օր մը ան-
գամ : Քովէդ կը հեռանայ, կ'երթայ ասդին
անդին, կ'ինայ եւ կ'աղտեղէ իւր հան-
գերճները, վասակար բաներ կ'ուտէ, հա-
կամէտ է միշտ վաս գործելու, Եթէ զըժ-
ուար է մարդուս պահել ուրիշ անձ մը,
շատ աւելի դժուար է պահել բուն իւր ան-
ձը : Պահել շրթունքս որպէս զի չհանեն
չար կամ անհանոյ խօսք : Պահել ձեռքերս,
որպէս զի բնաւ չզարնեմ երբ բարկանամ
եւ ոչ ընեմ որ եւ իցէ յիմարակին գործ :
Պահել սիրսու, ամուր գոցելով գոււը մէն
մի չար խորհրդոյ եւ զգացման դէմ : Երբէք
փորձած ես այսպէս պահել զքեզ օր մը

միայն : Եթէ փորձած ես, ուրեմն զիտես
թէ ո՛րչափ գժուար գործ է այն : Այլ եւս
մի ջանար ընել զայն գու ինքնդ : Պողոս
հասկցաւ թէ ինք չէր կրնար ընել . ուստի
իւր հոգին յանձնեց Քրիստոսի որպէս զի
նա պահէր զայն իրեն համար . եւ երբ մօտ
կը գտնուէր իւր կենաց վախճանին, յայ-
տարարեց :

«Գիտեմ թէ որու եմ հաւատացեր, եւ
համոզուած եմ որ իմ իրեն աւանդած բանս
կրնայ պահել» (Բ Տիմ.)

Ամենէն աղէկ բանը զոր կրնանք ընել՝
է հետեւիլ Պողոսի օրինակին :

Մօտերս երկաթէ մեծ արկդ մը շինուե-
ցաւ դրամատան մը համար : Արկդին եր-
կայնութիւնն էր յիսուն ոտք, ծանրու-
թիւնը՝ զրեթէ հարիւր տակառաչափ (իրը
80,000 քաշ), եւ պիտի զրուէր քարուկիր
թանձր պատերու մէջ : Ամէն բան եղաւ
ապահով ընելու համար զայն կրակէ եւ
աւազակներէ . եւ սակայն զանձը որ պի-
տի պահուի այն արկդին մէջ՝ կիսով չափ
անգամ ապահով պիտի չըլլայ այնպէս որ-
պէս հոգին որ Քրիստոսի քով կը պահուի,
եւ ժամէ ի ժամ կը շրջապատի անոր ար-
թուն ինսամքով :

3. Ուրիշ տեղ մը նոյն ձշմարտութիւնը
կը բացատրուի ուրիշ կերպով.

«Եւ անոր՝ որ կարող է ձեզ
անբիժ պահել» (Յուդ.)

Մինչեւ անգամ այն ժամանակ երբ տկար
ենք եւ մեր ճամբան խորտուբորտ է, Նա
կրնայ տանիլ զմեզ ապահով. Եթէ Պետ-
րոս մկանած չըլլար իւր Վարդապետին ե-
տեւէն երթալ հեռուանց, Քրիստոս կա-
րող էր պահել զնա իխալէ, մինչեւ անգամ
երկիւզի եւ վաֆանզի այն ժամուն մէջ։

4. Կայ բան մը որ շատ կը դժուարա-
ցունէ մեզ մեր անձին պահպանութիւնը.
Կան ուրիշներ որ կը միտին կործանել զմեզ։
Սատանան կը փորձէ զմեզ. չար ընկեր-
ներ կը փորձն զմեզ. շատ բաներ զորս
կը տեսնենք եւ կը լսենք՝ կը փորձն զմեզ։
Բայց Տէրը « կրնայ փորձանա-
ւորներուն օգնական ըլլալ» ,
(Երր.)

Մեր օրհնեալ Փրկիչը փորձուեցաւ ա-
մէն բանով մեզ նման, եւ զիտէ թէ ի՞նչ
օգնութեան կարօտ ենք։

Առաջարկուած է լուսաւոր նաւեր շա-
րել տեղ Ատլանտեան Ռվկանոսին մէջ

շոգենաւուց ամբողջ ճանապարհին վրայ ։
Եթէ ի գործ զրուէր այս առաջարկութիւ-
նը, ովկիանոսը պիտի ըլլար միծ քաղաքի
մը լապտերներով լուսաւորուած մէկ փո-
ղոցին նման, սա տարբերութեամբ միայն
որ լապտերները, փոխանակ իրարմէ հա-
րիւր ոտք հեռի ըլլալու, պիտի ըլլային հա-
րիւր մղոն հեռի։ Կը կարծուի թէ այս
կերպով բնաւ նաւ մը չկրնար հեռի ըլլալ
ճամբէն եւ օգնութիւնէ երբ վտանգ պա-
տահի։ Մինչ կը նաւարկենք կենաց լայ-
նածաւալ ծովուն վրայ, չկայ կէտ մը ուր
օգնութիւն միշտ մօտ չըլլայ մեզ։ Միայն
պարտիմք, երբ ալիքներն սպառնան կլլել
զմեզ, աղալակել աշակերտաց նման։
«Տէր, աղատէ մեզ. անա կը կորսուինք.»
եւ անմիջապէս օգնութիւն պիտի համնի
մեզ։ «Եւ պիտի ըլլայ որ անոնք զեռ
չկանչած՝ պատասխան պիտի տամ, ու
քանի որ գեռ կը խօսին՝ պիտի լսեմ.»

5. Պօղոս առաքեալ կ'ըսէ,
“Աստուած կարող է զանիկա
(այսինքն Աստուածոյ ծառան) կանդ-
նեցրնել» , (Հոռվմ.)

Շատ բաներ որ կը կարծենք թէ պիտի

ինան անշուշտ՝ կանգուն կը կենան։ Բիրզայի աշտարակը մէկ կողմը հակած է, եւ սակայն այնպիսի իմաստութեամբ եւ հանձարով շինուած է որ բոլորովին ապահով է։ Տես այն կոթողը, այնքան բարձր եւ բարակ է որ թերեւս կը թուփ քեզ թէ առաջին անգամ փչող զօրաւոր հովին անշուշտ պիտի կործանէ զայն։ Բայց եթէ զիտած ըլլայիր զայն մինչ կը շինուէր, պիտի տեսնէիր թէ երկաթէ հաստ ձող մը կ'անցնի անոր մէջ յատակէն մինչեւ գագաթը, եւ կը պահէ զայն հաստատուն եւ ապահով։ Մենէ ամենէն տկարը կրնայ կանգուն կենալ Սատանային նենգութեանց եւ յարձակմանց դէմ, եթէ մեր հիմը եւ զօրութիւնն ըլլայ Աստուած։

6. Կան ժամանակներ երբ փորձութեան հոսանքները կը թուին թէ կը քշեն կը տանին մինչեւ անգամ Աստուծոյ ծառաները։ Մենք իրաւունք եւ ուղղութիւն ըրինք, եւ նեղութիւն կը կրենք այդ պատճառաւ։ Զարերը կը ծաղրեն զմեղ եւ կը սպառնան կործանել զմեղ։ Փորձութիւնը մեծ է եւ կրնայ խոտորեցունել զմեղ պարտականութեան ճամբէն, որպէս զի զերծ ըլլանք ցաւէ եւ նեղութենէ։ Այսպիսի վայրկեան-

ներու մէջ կրնանք յիշել երրայեցի երեք մանկանց պատասխանն առ Նաբուգոդոնոսոր. «Ահա մեր պաշտած Աստուածը մեզ բորբոքած կրակի հողէն աղաւելու կարող է, քու ձեռքէդ ալ մեզ պիտի աղատէ . . .» (Դան.)

7. Վաեմ է զգալ զիս ապահով, հովանաւորեալ նախաինամութեամբն Աստուծոյ որ է իմ Բարեկամս։ Բայց այդ չէ ամէնը որուն կարօտ եմ։ Որպէս զի կեանքը ըլլայ պայծառ եւ երանելի, շատ բաներու պէտք ունիմ, որոց ես ինքնս չեմ կը բնար հասնիլ։ Պէտք ունիմ առողջութեան, պէտք ունիմ գործիս մէջ յաջողութեան, պէտք ունիմ իմաստութեան եւ առաջնորդութեան, պէտք ունիմ սրբութեան եւ օգտակարութեան։ Կը թուի թէ պէտքերս թուով կ'աճին հետզհետէ քանի որ տարիքը կ'աւելնայ։ բայց երբ կը զառնամ Սուրբ Գլուքին, ահա կը գտնեմ հոն Աստուծոյ խոստանեանքը ամէն պէտքի եւ կարօտութեանց հանդէպ։ Եւ Աստուած կարող է պահել բոլոր իւր խոստումները։ Այսպէս կը խորհէր Աքրանամ։ Նա «իր մտքին մէջ հաստատ պահեց թէ

ան որ խօսք տուաւ, ինքը կարող է ընելու ալ։» (Հոռվմ.)

8. Փոքրիկ աղջիկ մը կար որ անգամ մը ըսաւ իւր հօր թէ զիշերը գէշ երազներ տեսած եւ վախցած էր։ Հայրը պատասխանեց թէ եթէ ցերեկը չխորհէր այնպիսի բաներ, պիտի չտեսնէր այնպիսի երազներ։ «Բայց իմ ձեռքս չէ չխորհիլ,» ըսաւ իւր հօր, «գուն զիտես որ ես կարող չեմ անդործ պահել միտքս։» Կը վախնամ թէ մենէ խիստ շատերն անգործ կը պահեն իրենց միտքը, մինչ պէտք էր որ արթուն պահէին զայն եւ զբաղեցունէին։ Մենք բաւական չենք մտածեր Աստուծոյ եւ անոր մեծ խոստմանց վրայ, ժամանակաւ թագաւոր մը հարցուց իմաստունի մը թէ ինչ է երջանկութեան զաղանիքը։ Իմաստունը տարաւ թագաւորը, հանեց բարձր ժայռի մը վրայ ուր արծիւ մը չինած էր իւր բոյնը։ Եւ հարցուց, «Արծիւն ինչո՞ւ հոն, բարձր տեղը, շնչած է իւր բոյնը։» «Անոր համար անտարակոյս որ վտանգէ զերծ ըլլայ,» ըսաւ թագաւորը։ «Ուրեմն նմանէ այդ թոչունին,» պատասխանեց իմաստունը։ «Հինէ տունդ երկինքը, եւ պիտի ըլլաս խաղաղ եւ եր-

ջանիկ։» Եթէ բնակինք բարձրերը, Աստուծոյ խոստմանց մէջտեղ, եթէ լեցունենք մեր միտքն այն խոստումներով եւ յաճախ ինդրենք զամոնք աղօթքով, ապահով պիտի բնակինք։ Ճշմարիտ է թէ Աստուած միշտ չտար մեզ ամէն ինչ որ կը խնդրենք, վասն զի եթէ տար, վասպիտի ըլլար մեզ, բայց միշտ կու տայ մեզ ինչ որ լաւագոյն է, եւ յաճախ շատ աւելի քան զոր համարձակած ենք յուսալ։ Մենէ շատեր կրնան վկայել թէ Պօղոս կը խօսի ճշմարտութիւնը երբ կըսէ,

Աստուած «Կարող է առատու թեամբ ընել ամէն բաներէն աւելի՝ որ մենք կը խնդրենք կամ կը խորհինք ։»

(Եփես.)

9. Մենք մեր անձանց համար կարօտենք ապահովութեան եւ օգնութեան։ Եւ Աստուած կարող է տալ մեզ ամէն բան որուն կը կարօտինք եւ աւելի բան ալ։ Բայց ինչ լուր մեր շուրջ գտնուող աշխարհին նկատմամբ։ Նայէ անոր վրայ։ Բնդարձակ երկիրներ կան որոց բնակիչք

հազիւ թէ լսած են օրհնեալ Փրկչին ա-
նունը: Մեր քովիրը, մինչ մենք կը վայե-
լինք Աւետարանին այսչափ լոյսը, կը զբա-
նուին հազարաւորներ որ իրենց համար
կ'ապիին եւ քիչ կը խորհին Աստուծոյ
վրայ: Մարդուս ամբարտաւան սիրտը
ձշմարտութեան հակառակ կը կենայ եւ
չկամիր ընդունիլ զայն: Այս աշխարհի ամ-
բարտաւան մարդիկ կ'արհամարհեն Աւե-
տարանը եւ կը ջանան կասեցունել անոր
յառաջիմութիւնը: Ուրեմն ի՞նչ ընելու է:
Աստուծած կարող է ընել ամէն բան որոց
պէտք ունինք.

**“Անիկա կարող է ամբար-
տաւանութեամբ քալողները
ցածցընելու ։” (Դան.)**

Նա ցածցուց ամբարտաւան Փարաւոնը
մինչեւ փոշւոյ հաւասար եւ ստիպեց զնա
արձակել իւր ժողովուրդը: Յաղթահարեց
Հռոմէական ահազին պետութիւնը եւ
հպատակեցուց իւր խաչին:

10. Հրեայք կը կարծէին թէ Աստուծոյ
ժողովուրդ չըլլար առանց իրենց, բայց
Յիսուս վճռաբար կ'ըսէ,

“Աստուծած կարող է աս քա-

**րերէս Աքրահամին որդիներ
Հանել ։” (Մատթ.)**

Իր Աւետարանը հրատարակելու եւ իւր
եկեղեցւոյն հիմները աշխարհի մէջ զնելու
համար, Քրիստոս կանչեց աղքատ եւ ա-
նարգ դասէ մարդիկ, զորս դպիրք եւ փա-
րիսեցիք կ'ուզէին կոխուել իրենց ոտից
ներքեւ կամ մէկդի նետել իրենց ճամբուն
վրայէն: Այն որ մանկանց եւ կաթնկեր
աղայոց բերանէն գովութիւն կատարեց՝
կարող է ընել մինչեւ անդամ փոքր մա-
նուկ մը հզօր աշխատաւոր իւր թագա-
ւորութեան մէջ, միայն թէ այդ մանուկն
յօժարութեամբ մտնէ անոր բարերար ձե-
ռաց հովանուոյն ներքեւ:

11. Երբ Քրիստոսի համար կը զործենք,
յաշողութեան կողմը կը գտնուինք: Ամե-
նակարողը մեզ հետ կը դորձէ

**“Ան զօրութիւնովը որ կա-
րող է ամէնը իր տակը հնա-
զանդեցընելու ։” (Փիլք.)**

Կարող է հնազանդեցունել ամէն բան,
եւ պիտի հնազանդեցունէ: Եթէ մենք
աշխատինք Քրիստոսի համար, եւ ըստ

ամենայնի հետեւինք անոր, մասնակից պիտի ըլլանք անոր ուրախութեան եւ յաղթութեան :

12. Մութ ստուեր մը կը կենայ մեր առջեւ : Մինչեւ անդամ մանուկները կը մեռնին . եւ մինչ կը կենանք բաց գերեզմանին առջեւ, չնաք կրնար զապել մեր սոսկումը եւ դողումը խորհելով թէ պիտի գայ օր մը երբ մենք ալ պիտի պառկինք հոն : Բայց Աստուծոյ զօրութիւնը կը հառնի մինչեւ անդամ մահուան խաւարչտին ընակարանաց մէջ : Երբ Սբրահմու հրամայուցաւ դոհ մատուցանել իւր որդին զիսահակ, յօժարութեամբ մատուց .

«Փանովի կը մտածէր թէ Աստուած մեռելներէն ալ կարող է յարուցանել»,,

(Երբ.)

Եւ Սբրահմու մտածութիւնն ուղիղ էր : Մենք պէտք չէ որ վախնանք մահուանէ, քանզի Քրիստոս յաղթած է անոր : Քրիստոս յարեաւ գերեզմանէն եւ եղաւ ննջեցելոց անդրանիկը : Օր պիտի գայ երբ անոր բոլոր ժողովուրդն անոր ձայնը լսելով պիտի ելեն իրենց գերեզ-

մաններէն՝ անմահական փառք հագած, որպէս զի թագաւորեն իրենց թագաւորին եւ Գլխուն հետ անոր պայծառափայլ երկնային ընակարանին մէջ : Նա խոստացած է յարուցանել մեռեաները եւ կարող է կատարել ինչ որ խոստացած է :

Եւ հիմա տասներկու գոհարներն ամէնքն ալ իրենց ձառագայթները կը ցոլացունեն մեր վրայ : Միթէ չե՞ն զեղեցիկ : Թերեւս մինչ կը թղթատես Սուրբ Գիրքդ զանոնք վնասուելու համար, անոնց նման ուրիշներ ալ պիտի գտնես : Եւ որչափ շատ գտնես՝ աղէկ է : Անոնց ամենուն վրայ զրոշմուած է «Աստուած կարող է», խօսքը :

1. «Յողորովին կարող ալ է ապրեցընելու անոնք՝ որ իրմով Աստուծոյ կու գան»»

2. «Գիտեմ թէ որու եմ հաւատացեր, եւ համոզուած եմ որ իմ իրեն աւանդած բանս կրնայ պահել»»

3. «Եւ անոր՝ որ կարող է ձեզ անրիծական ըլլալ»»

4. «Կրնայ փորձանաւորներուն . . . օդնական ըլլալ»»

5. «Աստուած կարող է զանիկա [այս-ինքն՝ Աստուծոյ ծառան] կանգնեցրնել :»

6. «Ահա մեր պաշտած Աստուածը մեզ
բորբոքած կրակի հնոցէն ազատելու կա-
րող է, քու ձեռքէդ ալ մեզ պիտի ազա-
տէ»

7. Աբրահամ «իր մտքին մէջ հաստատ պահեց թէ ան որ խօսք տուաւ, ինքը կարող է ընելու աւ»

8. Աստուած «կարող է առատութեամբ
ընել ամէն բաներէն տւելի՝ որ մենք կը
խնդրենք կամ կը խորհինք»:

9. «Անիկա կարող է ամբարտաւանութեամբ քայողները ցածցընելու»:

10. «Աստուած կարող է աս քարերէս Աբրահամին որդիներ հանել.»

44. «Ան զօրութիւնովը որ կարող է
ամենը իր տակը հնագանդեցրնելու :»

12. Արքանամ զո՞ւ մատուց խսհակը,
«Քանի կը մտածէր թէ Աստուած մեռել-
ներէն ալ կարող է յարուցանել»:

Հոս կայ հաստատուն եւ ապահով բան
մը երկրիս բոլոր փօփոխութեանց մէջ։
Այս որ կ'ապաւինի Աստուծոյ կարողու-
թեան՝ ունի տոկալու ոյժ եւ ամէն տե-
սակ չարեաց դիմագրելու զօրութիւն որ

բնաւ չտկարանար : Անորն է Աստուծոյ
զօրութիւնը : Անոր մէջ կ'ապրի Քրիստոս .
եւ մինչ Քրիստոս կ'ապրի հռն , նա եւս
կ'ապրի :

Երբ ես հաստատ կը հաւատամ Սատու-
ծոյ խոստմանց եւ կապաւինիմ օրհնեալ
Փրկչն, ուրեմն ուրախութիւնս պիտի
ըլլայ զիմնալ թէ նա կարող է պաշտպա-
նել զիս, եւ թէ ոչ ոք կրնայ յափշտակել
զիս անոր ձեռքին։ Նա կարող է փրկել
զիս, կարող՝ իւր հոգևով որ տրուած է
ինձ սուրբ ընկերու համար զիս, կամ դառ-
նալով կրկին մեր գոճարներէն միոյն, նա
“Իսորող է առասութեամբ
ընկել ամեն բաներէն առելին,
որ ես կը խնդրիմ կամ կը խորհիմ:

-33330000000-

2629

«Ազգային գրադարան



NL0029501

2554